




COUNTY OF LOS ANGELES

Public Health

Նախապատրաստուած
արտակարգ իրավիճակների

- Բարի գալուստ մեր դասընթացին, որը կօգնի Ձեզ՝ Ձեր ընտանիքի հետ միասին նախապատրաստվել աղետների դեմ:
- Այս ծրագիրն ունի երեք փուլ:
- Ծրագրի ավարտին Դուք կստանաք նյութեր, որոնք Ձեզ կօգնեն նախապատրաստել Ձեր ընտանիքը աղետների դեմ:



ԾԱՅՐԱՀԵՂ ԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

1. Բնական

2. Մարդածին

- Չկանխամտածված
- Կանխամտածված



- Լինելով Հարավային Կալիֆոռնիայի բնակիչներ՝ մենք ենթակա ենք տարբեր տեսակի ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակների:
- Ձեզանից քանի՞սն է վերջին չորս տարիների ընթացքում աղետի գոհ կամ ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակի մասնակից դարձել:
- (Խնդրել 2 մասնակցի՝ հակիրճ պատմել իրենց պատմությունները:)

ՌՈՒՄՔ

ՊԱՅԹՅՈՒՆՆԵՐ

ՏՈՌՆԱԴՈ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԽՈՒՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ԽԱՓԱՆՈՒՄ

ՊԱՏԱՆԴՆԵՐԻ
ՎԵՐՑՆՈՒՄ

ԵՐԿՐԱՇԱՐԺ

ԱՎԻԱՎԹԱՐ

ՑՈՒՆԱՄԻ

ՇԻՆՈՒԹՅԱՆ
ՓԼՈՒԶՈՒՄ

ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ԽԱՓԱՆՈՒՄ

ՀԵՂԵՂ

ԶՐԱՄՔԱՐԻ ՃԵՂՔՈՒՄ


ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԴԵՀ

ՎՏԱՆԳԱՎՈՐ
ՆՅՈՒԹԵՐ


ԳՆԱՑՔԻ ԴՈՒՐՄ ԸՆԿՆԵԼԸ ՌԵԼՍԵՐԻՑ

- Ահա մի քանի օրինակներ այն ծայրահեղ անհրաժեղատության, որոնք կարող են պատահել:



ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ

- Երկրաշարժներ
- Հրդեհներ
- Սողանքներ
- Փոթորիկներ
- Հեղեղներ



- Սրանք օրինակներ են բնական աղետների, որոնք կարող են տեղի ունենալ Հարավային Կալիֆոռնիայում:



ՄԱՐԴԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐ


Չկանխամտածված

- Քիմիական աղետ
- Նավթի արտահոսք
- Էլեկտրաէներգիայի մատակարարման խափանում

Կանխամտածված

- Ահաբեկչություն
- Հանցագործություն
- Քաղաքացիական խռովություններ

- Գոյություն ունի մարդածին աղետների երկու տեսակ՝ շկանխամտածված և կանխամտածված:
- Չկանխամտածված աղետները սովորաբար պատահական միջադեպերի հետևանք են, ինչպես, օրինակ, քիմիկատների կամ նավթի արտահոսքը:
- Կանխամտածված աղետները, ինչպիսիք են օրինակ ահաբեկչությունն ու քաղաքացիական խռովությունները, կազմակերպվում են վնաս պատճառելու մտադրությամբ:



ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՄԻԱՄԻՆ

- Դուք և Ձեր ընտանիքը
- Հարևանների հետ
- Համայնքի հետ



- *Ընթերցել սլայդը*
- Նախապատրաստումն ծայրահեղ անհրաժեղատության իրավիճակի դեմ ներառում է հարաբերությունների երեք տեսակ՝ Դուք և Ձեր ընտանիքը, հարևանությունը և համայնքը:



ՆԱԽ՝ ԸՆՏԱՆԻՔԸ

Ո՞ւմ եք Դուք
ԸՆՏԱՆԻՔ
համարում:




Ընթերցել հարցը

- Ո՞ւմ եք Դուք ԸՆՏԱՆԻՔ համարում:

Խնդրել մասնակիցներին պատասխանել այս հարցին.

- Որևէ մեկը կարո՞ղ է այս հարցին պատասխանել:



ՊԱՏՐԱՍՏԵՔ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

- ✓ Հաղորդակցության ծրագիր
- ✓ Դպրոցական ծրագիրներ
- ✓ Հանդիպման վայրեր
- ✓ Էվակուացման գործընթացներ
- ✓ Տան անվտանգության ծրագիր
- ✓ Դերերն ընտանիքում
- ✓ Առաջին անհրաժեշտության
իրեր
- ✓ Ինչպե՞ս օգնություն ստանալ



Այժմ դիտենք այն գործողությունների
ցանկին, որոնք պետք է կատարեք՝ Ձեր
ընտանիքը նախապատրաստելու համար

- Նախ՝ պետք ունիք հաղորդակցության ծրագրի: Պահեք դա
ձեռքի տակ, օրինակ՝ դրամապանակում, պայուսակի կամ
մեքենայի մեջ:

- Այնուհետև Դուք պետք է որոշեք Ձեր ընտանիքի հանդիպման
տեղերը, եթե դեպքի ժամանակ տարբեր վայրերում գտնվեք:

- Ձեզ անհրաժեշտ է էվակուացման ծրագիր՝ տանից դուրս և
Ձեր թաղամասից դուրս (Դուք նաև պետք է հասանելի լինեք
Հատուկ կարիքավոր բնակչությանը (SNP), օրինակ
հաշմանդամներին, ծերերին և երեխաներին):

- Ինչպե՞ս եք օգնություն ստանալու իրական ծայրահեղ
անհրաժեշտության դեպքում:

- Որո՞նք են Ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամի դերն ու
պարտականությունները աղետի դեմ նախապատրաստվելու
գործում:

- ԱՅՍ կարևոր խնդիրներն ենք մենք քննարկելու հաջորդիվ:



ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ



Որտե՞ղ եք Դուք գտնվելու աղետի ժամանակ

- Դիտարկեք քուք վայրերը, որտեղ Դուք և Ձեր ընտանիքի անդամները կարող են լինել միաժամանակ:
- Ինչպիսի՞ն է Ձեր օրը: Օրական որքա՞ն ժամանակ եք Դուք անցկացնում... աշխատանքի վայրում, ճանապարհին, տանը կամ այլ վայրերում:
- Ինչպե՞ս կփոփոխվեր Ձեր ծրագիրը՝ կախված օրվա հատվածից:
- Ի՞նչ տարբերություններ կունենար Ձեր ծրագիրը, եթե Դուք հաշմանդակ լինեիք:
- **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ.** Բաժանվեք երկու խմբերի:
Ներկայացեք Ձեր կողքինին և խոսեք այն մասին, թե ինչ հարկավոր կլինի հաշվի առնել ծրագրումի ժամանակ օրվա տարբեր ժամերին:



ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՊԼԱՆ

ՈՐՈՇԵՔ՝

- Ձեր ընտանիքի կոնտակտային անձին
- Առաջնային հեռախոսահամարը (տեղական)
- Այլընտրանքային հեռախոսահամարը (նահանգից դուրս)



Ինչպե՞ս եք կապվելու Ձեր ընտանիքի հետ:

- Կազմակերպեք ընտանեկան ժողով և քննարկեք.
- Ո՞ւմ պետք է բոլորը զանգեն: - Ձեզ բոլորիդ անհրաժեշտ է կապի մեկ կենտրոն, որպեսզի տեղեկացվեք, թե որտեղ են գտնվում Ձեր ընտանիքի անդամները:
- Հիշեք. ամենայն հավանականությամբ բջջային հեռախոսակապը չի աշխատի: Այնպես որ Ձեզ մոտ պահեք հեռախոսահամարների ցանկ և գտեք քաղաքային հեռախոսից օգտվելու հնարավորություն:
- Ունեցեք մեկ տեղական կոնտակտ և մեկ կոնտակտ՝ նահանգից դուրս:




ԴՊՐՈՑԻ ՊԼԱՆԸ

- Իմացեք դպրոցի ծրագիրը
- Թարմ պահեք Ձեր կոնտակտային տվյալները
- Իմացեք, թե լիազորման ինչ գործընթաց է հարկավոր, որպեսզի երեխային բաց թողնեն
- Զրուցեք Ձեր երեխաների և նրանց խնամողների հետ



- *Ընթերցել սլայդը*
- Դպրոցին պարբերաբար տրամադրեք Ձեր ճշտված կոնտակտային տվյալները:
- Իմացեք, թե ինչպիսի լիազորություն է պետք, որպեսզի երեխային բաց թողնեն ընտանիքի անդամի կամ ընկերոջ մոտ:
- ՄԻՇՏ քննարկեք երեխաների հետ:
- Յուրաքանչյուր դպրոց ծրագիր ունի:
- Ձեր երեխաների բոլոր խնամողները պետք է ծանոթանան Ձեր ծրագրին:



ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐԵՐ

- Որոշեք տարբեր հանդիպման վայրեր
- Քննարկեք, թե *երբ* եք այնտեղ գնալու
- Ի՞նչ անել, եթե չկարողանաք այնտեղ հասնել

Ընտանեկան ժողովի ընթացքում քննարկեք հանդիպման վայրերը.

- Հանդիպման տարբեր վայրեր՝ կախված իրավիճակից:
- Հանդիպման վայրերի օրինակներ.
 - Մնալ դպրոցում
 - Հանդիպել եկեղեցում
- Ե՞րբ գնալ այնտեղ:
- Ի՞նչ անել, եթե չկարողանաք հասնել այնտեղ.
այլընտրանքային հանդիպման վայրեր:




ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐԵՐ

Ձեր տնից դուրս.

- Շքամուտքի դիմացի բակում
- Հարևանի բակում

- *Ընթերցել սլայդը*
- Հիշեք, որ ծայրահեղ անհրաժեղատության իրավիճակի դեպքում հանդիպման վայրերից մեկը պետք է լինի Ձեր տան մոտ: Դա կարող է լինել Ձեր շքամուտքի դիմացի բակը կամ, անհրաժեշտության դեպքում, մեկ այլ վայր, ասենք՝ հարևանի տունը:



ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐԵՐ


Տանից հեռու (Էվակուացման դեպքում)

- Եկեղեցիներ/տաճարներ,
կրոնադավանական
կազմակերպություններ
- Այգի
- Դպրոց
- Հասնել այնտեղ

- *Ընթերցել սլայդը*
- Բացի տան մոտակայքում գտնվող հանդիպման վայրերից, նաև ունեցեք հանդիպման վայր տանից հեռու, ուր կհավաքվեք այն դեպքում, եթե ընտանիքի անդամները որեւէ պատճառներով չկարողանան տուն գալ:




ՏՆԻՑ ԷՎԱԿՈՒԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ




- *Ընթերցել սլայդը*
- Սա տնային էվակուացման ընթացակարգերի պատկեր է: Յուրաքանչյուր տուն պետք է ունենա դուրս գալու առնվազն երկու ճանապարհ:
- Բացի այդ, եթե Ձեր տան պատուհանները մոլակներ ունեն, ապա պատուհանի վրա պետք է պարզունակ լինի՝ տանից դուրս գալու համար:
- Վերին հարկերում գտնվողների համար պետք է հրդեհային սանդուղք լինի:
- Հաշմանդամների, ծերերի և երեխաների համար նույնպես պետք է մշակվի էվակուացման ծրագիր:
- Հոգ տարեք, որպեսզի նախասենյակներում եռուզեռ չլինի:
- Համոզվեք, որ առարկաները, որոնք կարող են վայր ընկնել աղետի ժամանակ, չեն փակի էվակուացման ուղիները:



ՎԵՐԱԽՄԲԱՎՈՐՄԱՆ ԿԵՏ



- *Ընթերցել սլայդը*
- Անհրաժեշտ է նաև ունենալ վերախմբավորման կետ՝ տանից դուրս, ուր ընտանիքը կարող է վերափափորվել աղետից հետո:




Եթե Ձեզ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԷՎԱԿՈՒԱՑՎԵԼ...

Ի՞նչ եք ցանկանում
վերցնել Ձեզ հետ:

Ծրագրե՛ք նախապես:




- Բացի որոշելուց, թե որտեղ եք հանդիպելու, Դուք պետք է նաև որոշեք, թե ինչ եք վերցնելու Ձեզ հետ:
- Հիշեք. հրդեհի դեպքում Դուք պետք է ՄԻՄԻԱՅՆ կենտրոնանաք ընտանիքի հետ միասին ապահով վայր տեղափոխվելու վրա:
- Մենք ցույց կտանք պաշարների օրինակներ, որոնք հարկավոր է պահել ծայրահեղ անհրաժեղությունների փրկիչների համար: Դրանցից զատ, ի նչ արժեքավոր իրեր կան, որոնք Դուք կվերցնեիք Ձեզ հետ: Արդյո՞ք դրանք հեշտ հասանելի են:
- Հիշեք. հնարավոր է՝ Դուք սահմանափակ տարածք ու ժամանակ ունենաք, և առաջնային խնդիրն է հոգ տանել, որպեսզի բոլորը ապահով լինեն: Իրերը կարող են զգացական կամ դրամային արժեք ունենալ:



ՏԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

- Արդիականացրե՛ք Ձեր տները, գրասենյակները և մյուս շինությունները
- Պահպանե՛ք գերծանր կահույքը, ջրատաքացուցիչները, հեռուստացույցներն ու այլ իրեր վնասվածքներից՝ փոկերի միջոցով


- *Ընթերցել սլայդը*
- Անհրաժեշտ է արդիականացնել կամ բարելավել տների և/կամ գրասենյակների շինությունները և դրանց դիմադրողականությունը աղետներին:
- Նաև կարևոր է ապահովել որոշ առարկաներ, օրինակ հեռուստացույցներն ու ջրատաքացուցիչները, քանի որ դրանք կարող են վար ընկնել աղետի, օրինակ երկրաշարժերի դեպքում:



ՏԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

- Ապահովեք պահարանները մղվակներով
- Ապահովեք թանկարժեք փոքր իրերը երկրաշարժերի դեմ նախատեսված շաղախով
- Այսօրվանից սկսած՝ տեղափոխեք ծանր առարկաները ստորին դիրքեր

- *Ընթերցել սլայդը*
- Պահարանները հարկավոր է ապահովել մոլակներով, որպեսզի դրանք տեղաշարժ չլինեն, օրինակ՝ երկրաշարժի ժամանակ:
- Փոքր առարկաները հարկավոր է ապահովել երկրաշարժի դեմ նախատեսված շաղախով:
- Վստահ եղե՛ք տեղափոխել ծանր իրերը ստորին դիրքեր: Որոշ առարկաներ, օրինակ հեռուստացույցները կամ ռադիոընդունիչները կարող են վայր ընկնել երկրաշարժի կամ այլ աղետի ժամանակ:




ՎԱՐԺՎԵՔ ԵՎ ՀԵՏԵՎԵՔ ՁԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ

Առնվազն յուրաքանչյուր վեց (6)
ամիսը մեկ.

- Վերանայե՛ք հաղորդակցության
ծրագիրները
- Զրուցեք Ձեր երեխաների հետ
- Տանը վարժանքներ կազմակերպե՛ք
(Էվակուացում և հրդեհի մարում)

- Երբ ծրագիրը մշակված կլինի, անհրաժեշտ է վարժվել, որպեսզի Դուք և Ձեր ընտանիքի անդամները կարողանաք իրագործել դա՝ աղետի դեպքում:
- Ձեր երեխաների համար քննություն կազմակերպե՛ք յուրաքանչյուր վեց ամիսը մեկ կամ ավելի հաճախ (կախված Ձեր երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու ունակությունից):
- Անցկացրեք էվակուացման վարժանքներ:
- Օգտագործե՛ք ժամերի տեղափոխման օրերը որպես հիշեցում (գարնանը և աշնանը):



ՆՇԵ՛Ք ՁԵՐ ՕՐԱՑՈՒՅՑՈՒՄ

- Թարմացրե՛ք հաղորդակցության ծրագիրը
- Փոխարինե՛ք մնացած ջուրը, սնունդը և այլ ժամկետանց պաշարներ յուրաքանչյուր վեց (6) ամիսը մեկ
- Ստուգե՛ք հրդեհի դետեկտորները և վերալիցքավորեք Ձեր կրակամարիչները

- *Ընթերցել սլայդը*
- Անհրաժեշտության դեպքում թարմացրե՛ք Ձեր հաղորդակցության ծրագիրը:
- Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ թարմացրե՛ք սննդի, ջրի և այլ պաշարները, որոնք կարող են ժամկետանց լինել: Պլանավորե՛ք այս գործողությունը կատարել ժամերի փոփոխման օրերին:
- Ստուգե՛ք Ձեր կրակմարիչների և հրդեհի դետեկտորները՝ համոզվելու համար, որ դրանք աշխատում են:



ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԵՐԵՐ

- Մովորե՛ք անջատել Ձեր կոմունալ ծառայությունները
- Մովորե՛ք օգտագործել կրակամարիչներ
- Մշակեք ընտանի կենդանիների էվակուացման պլանը
- Հավաքեք ծայրահեղ անհրաժեշտության իրեր



- *Ընթերցել սլայդը*
- Ընտանիքի անդամները պետք է սովորեն անջատել կոմունալ ծառայությունները և օգտագործել կրակմարիչներ: Գործիքները պահե՛ք հասանելի վայրում:
- Եթե Դուք հաշմանդամ եք, ցույց տվեք հարևանին կամ որևէ այլ մեկին, թե ինչպես անջատելու են Ձեր կոմունալ ծառայությունները և օգտագործել կրակմարիչներ:
- Անհրաժեշտ է մշակել ընտանի կենդանիների էվակուացման ծրագիր:
- Անհրաժեշտ է հավաքել ծայրահեղ անհրաժեշտության իրերի լրակազմ:



ԻՆՉՊԵՍ ԱՆՋԱՏԵԼ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գազի անջատիչ փական


Գազի սարքը անջատելու համար, պտտե՛ք փականը մեկ քառորդ պտույտ:

Գազի ծառայության անջատիչ փական

Գազի փականն անջատելու համար օգտագործե՛ք 12-15 չափսի կարգավորելի խողովակային մանգաղաձև պտուտակաբանալի: Բանալին պտտե՛ք մեկ քառորդ պտույտ՝ ցանկացած ուղղությամբ:



- Այժմ Դուք և Ձեր ընտանիքը ապահով եք, սակայն ի՞նչ կարող եք անել, որպեսզի Ձեր տունը նույնպես ապահով լինի:
- *Ընթերցել սլայդը*
- Արդյոք գիտե՞ք, թե ինչպես են անջատում կոմունալ ծառայությունները: ծայրահեղ անհրաժեղատության դրության դեպքում, ի՞նչ փոխարինող հնարավորություններ ունի Ձեր տանտերը:
- Եթե մասնակիցներին անհրաժեշտ լինի լրացուցիչ տեղեկություն, նրանք կարող են դիմել կոմունալ ծառայությունը տրամադրող ընկերությանը:
- Հիշեք, որ գազի փականն անջատելու համար անհրաժեշտ է 12-15 մատնաչափ չափսի մանգաղաձև պտուտակաբանալի:



ԻՆՉՊԵՍ ԱՆՋԱՏԵԼ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆԸ

Պարզե՛ք, թե որտե՞ղ է գտնվում Ձեր տան
էլեկտրականության գլխավոր անջատիչը

Որպեսզի ծայրահեղ անհրաժեշտության
դրության դեպքում կարողանաք արագ
անջատել ամբողջ տան էլեկտրականությունը:

Սովորե՛ք կարգավորել ավտոմատ
անջատիչը

Ցանցի սարքերը կամ հոսանքն անջատելուց
հետո ամուր սեղմելով՝ անջատեք
փոխարկիչը, այնուհետև նորից միացրեք:



- *Ընթերցել սլայդը*
- Անհրաժեշտ է նախապես իմանալ, թե որտե՞ղ է գտնվում Ձեր տան էլեկտրականության գլխավոր անջատիչը, որպեսզի կարողանաք դա արագ անջատել:
- Ավտոմատ անջատիչը միացնելու համար անջատե՛ք փոխարկիչը, այնուհետև նորից միացրեք:
- Սովորաբար ջուրը կարելի է անջատել՝ պտտելով տանից դուրս գտնվող ծորակը:



ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԿՐԱԿՄԱՐԻՉԸ

P – Քաշե՛ք ձողը
A – Պահե՛ք կրակի հիմքի
ուղղությամբ
S – Մեղմե՛ք բռնակը
S – Արձակե՛ք կողքից կողք

Արձակե՛ք կարճ զարկերով
1/2 վայրկյանից մինչև **1**
վայրկյան յուրաքանչյուրը



- *Ընթերցել սլայդը*

Արդյոք ունե՞ք կրակմարիչ և գիտե՞ք, թե դա որտեղ է գտնվում: Նոր կրակմարիչների մեծամասնությունն ունի կողավորում՝ բոլոր տեսակի հրդեհների համար (A, B և C): Պարզե՛ք, թե որ տեսակի են Ձեր կրակմարիչները: Մասնակիցները պետք է դիմեն իրենց տեղական հրշեջ ծառայության՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:




ՈՐՈՂՔ ԵՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԸ

- Տուն
- Աշխատանք
- Դպրոց
- Մեքենա



- *Ընթերցել սլայդը*
- Հարկավոր է ծայրահեղ անհրաժեշտության իրերի լրակազմ հավաքել այդ վայրերից յուրաքանչյուրի համար, քանի որ այս լրակազմերը ստեղծված են տարբեր իրավիճակների և հատուկ կարիքների համար:
- Հիշեք, որ ծայրահեղ իրավիճակներ կարող են տեղի ունենալ որեւէ տեղ կամ ժամանակ:




ԾՐԱՐԻ 10 ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՌԱՐԿԱՆԵՐ

1. Զուր
2. Մնունդ
3. Առաջին
օգնության
դեղարկղիկ
(ծրար)
4. Չեռնալամա
5. Ռադիոընդունիչ
6. Դեղորայք



- *Ընթերցել սլայդը*
- Այս 10 իրերից յուրաքանչյուրը կքննարկվի մանրամասնորեն:



ԾՐԱՐԻ 10 ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՌԱՐԿԱՆԵՐ

7. Թղթադրամ և կարևոր փաստաթղթեր
8. Հագուստ և դիմացկուն կոշիկ
9. Գործիքներ
10. Մանիտարահիգիենական պարագաներ




- *Ընթերցել սլայդը*
- Լրակազմերը հավաքելիս մենք կքննարկենք մասնագիտական իրեր, ներառյալ՝ հատուկ պաշարները, որոնք անհրաժեշտ են երեխաների, ծերերի, հաշմանդամների և նրանց ծառայող կենդանիների, կամ ընտանի կենդանիների համար:



ՊԱՇՏԱՐՆԵՐ՝
ԱՌՆՎԱԶՆ **3ից-7**
ՕՐՎԱ ՀԱՄԱՐ
կամ ավելի



- *Ընթերցել սլայդը*
- Նախկինում առաջարկվում էր պաշարներ ունենալ 3 օրվա համար, սակայն այժմ խորհուրդ է տրվում նախատեսել 7 օրվա պաշար:



ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԾՐԱՐ

1. Զուր –

Օրական մեկ (1) գալոն
յուրաքանչյուր անձի համար


2. Մնունդ –

Բարձր կալորիականությամբ
սնունդ պահածոյացված,
ջրազրկված, փոշիացված

- ✓ Հիշեք Ձեր ընտանի կենդանիների մասին
- ✓ Պահածոյի բացիչ



- *Ընթերցել սլայդը*
- Խորհուրդ է տրվում ծայրահեղ անհրաժեշտության լրակագումով ունենալ օրական մեկ գալոն ջուր մեկ անձի համար, քանի որ ջուրն օգտագործվում է ոչ միայն խմելու, այլ նաև ատամները մաքրելու, ճաշ պատրաստելու և այլ նպատակների համար:
- Մի՛ մոռացեք ջրի և սննդի մասին՝ Ձեր կենդանիների համար:
- Եթե ընտանիքի անդամները ցանկանում են ծորակի ջուր պահել այնպիսի վայրերում, ինչպես, օրինակ՝ լոգարանը, ապա քլորի հաբերը կամ մի քանի կաթիլ քլոր կարելի է օգտագործել ջուրը մաքրելու համար:
- Անհրաժեշտ է ունենալ չինացող ուտելիք, օրինակ՝ ջրեր կամ պահածոյացված սնունդ: Լավ միտք է նաև “սփռփիչ” ուտելիք պահել հատկապես երեխաների համար՝ օգնելու նրանց հեշտ տանել իրադրությունը:
- Չնայած եռացումն ամենալավ միջոցն է մանրէները ոչնչացնելու և ջուրը մաքրելու համար, սակայն քլորով մշակումը նույնպես կարելի է օգտագործել նույն նպատակով: Սպասե՛ք, մինչև ջուրը նստվածք տա, այնուհետև մեկ քվարտ ջրին ավելացրեք 2 կաթիլ քլոր, կամ մեկ գալոնին 8 կաթիլ:



ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԾՐԱՐ

3. Շտապ օգնության դեղարկղիկ


4. Լապտեր

✓ Լրացուցիչ մարտկոցներով

5. Ռադիոընդունիչ

✓ Լրացուցիչ մարտկոցներով

- *Ընթերցել սլայդը*
- Շտապ օգնության դեղարկղիկն անհրաժեշտ է ցանկացած փոքր վնասվածքի դեպքում:
- Ձեռքի տակ ունեցեք գրպանի լապտեր՝ ավելորդ մարտկոցներով:
- Հարկավոր է ձեռքի տակ նաև ունենալ ռադիոընդունիչ և ավելորդ մարտկոցներ, քանի որ քիչ հավանական չէ, որ էլեկտրականություն չլինի:
- Կան նաև ձեռքի շարժիչով լապտերներ և ռադիոընդունիչներ:



ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԾՐԱՐ

6. Դեղորայք

- ✓ Առանց դեղատոմսի վաճառվող
- ✓ Դեղատոմսով
- ✓ Դեղատոմսերի ցանկ ընտանիքի
յուրաքանչյուր անդամի համար
- ✓ Ավելորդ ակնոց

- *Ընթերցել սլայդը*
- Կարևոր է ունենալ ազատ և դեղատոմսով վաճառվող դեղորայք: Դիմե՛ք Ձեր բժշկին և ստացե՛ք դեղատոմսով տրամադրվող դեղորայքի լրացուցիչ պաշար:
- Կարևոր է նաև ձեռքի տակ ունենալ բոլոր դեղատոմսերի ցանկը, ոչ միայն դրանք լրացնելու համար, այլ նաև փրկարար աշխատողներին և բժիշկներին անձի առողջական վիճակը ներկայացնելու համար:
- Լրացուցիչ ակնոց ունենալը նույնպես կարևոր է՝ տեսնելու ու ընթերցելու համար:



ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԾՐԱՐ

7. Դրամ և կարևոր փաստաթղթեր

- ✓ Փոքր թղթադրամներ և մետաղադրամներ
- ✓ Բժշկական և ապահովագրական քարտի, ծննդյան վկայականի պատճեններ
- ✓ Ընտանիքի անդամների լուսանկարներ
- ✓ Հեռախոսահամարներ



- *Ընթերցել սլայդը*
- Պահե՛ք Ձեզ մոտ մանր մետաղադրամներ և \$1, \$5 ու \$10 արժողությամբ թղթադրամի պաշար:
- Պահե՛ք Ձեզ մոտ բժշկական և ապահովագրական քարտի, ինչպես նաև՝ ծննդյան վկայականների պատճեններ:
- Պահե՛ք Ձեզ մոտ ընտանիքի անդամների լուսանկարները, եթե պետք է գտնեք և վերամիավորվեք նրանց հետ:
- Պահե՛ք Ձեզ մոտ ծայրահեղ անհրաժեշտության պարագաների հառախոսի համարների, փոքր հեռախոսագիրք, քանի որ հնարավոր է՝ չկարողանաք այդ համարներին մուտք գործեք բջջային հեռախոսից:



ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԾՐԱՐ

8. Հագուստ և դիմացկուն կոշիկներ

- ✓ Ծածկոցներ/անջապարկեր, եթե պետք է տնից դուրս էլակուլացվել



- *Ընթերցել սլայդը*
- Պահե՛ք Ձեզ մոտ փոխանորդ հազուստ և դիմացկուն կոշիկ: Ձեզանից քանի՞սը կարող է տուն քայլել այն կոշիկներով, որոնք հիմա կրում եք:



ԾԱՅՐԱՇԵՐ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԾՐԱՐ

9. Գործիքներ.

- ✓ Գազի/ջրի խողովակի պտուտակաբանալի
- ✓ Պտուտակահան և նիզ
- ✓ Մեկուսիչ ժապավեն
- ✓ Պլաստմասե թերթեր
- ✓ Պարան
- ✓ Դանակ
- ✓ Ճանապարհային քարտեզներ

- *Ընթերցել սլայդը*
- Ծայրահեղ անհրաժեշտության ծրարի լրակազմում անհրաժեշտ են հիմնական գործիքներ:
- Հիշեք, որ կոմունալ ծառայություններն անջատելու համար անհրաժեշտ է գազի/ջրի խողովակային պտուտակաբանալի:
- Տեղում պատսպարվելու դեպքում դռներն ու պատուհանները փակելու համար կպահանջվեն պլաստմասսե թերթեր:
- Էվակուացման դեպքում հատկապես կարևոր են ճանապարհային քարտեզները:




ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԾՐԱՐ

9. Գործիքներ (շարունակություն)

- ✓ Անջրանցիկ լուցկի
- ✓ Կարգավորելի պտուտակաբանալի
- ✓ Աշխատանքային ձեռնոցներ
- ✓ Մուկիչ
- ✓ Կրակմարիչ տան համար



- *Ընթերցել սլայդը*
- Անջրանցիկ լուցկի, հատկապես հեղեղների, օրինակ՝ Քաթրինա փոթորիկի դեպքում:
- Կարևոր է նաև կրակմարիչ ունենալ տան համար (Հիշատակել սլայդը, որը բացատրում է P.A.S.S. մեթոդը):



ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԾՐԱՐ

10. Մանիտարահիգիենական պարագաներ

- ✓ Զուգարանի թուղթ/թղթյա սրբիչներ
- ✓ Աղբի տոպրակներ
- ✓ Ձեռքերի ախտահանիչ/թաց անձեռոցիկներ
- ✓ Տակդիրներ և կանացի հիգիենայի պարագաներ



- *Ընթերցել սլայդը*
- Թղթյա սրբիչներն ու զուգարանի թուղթն անհրաժեշտ են արտակարգ դրության ժամանակ՝ նույն գործառույթների համար:
- Ցելոֆանե տոպրակները կարելի է օգտագործել ոչ միայն աղբի համար, այլ նաև որպես զուգարանի փոխանորդ տարա:



ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԾՐԱԲ

Պաշարներ՝

- ✓ Երեխաների համար
- ✓ Ծերերի համար
- ✓ Հաշմանդամների համար
- ✓ Ընտանի կենդանիների համար



- *Ընթերցել սլայդը*
- Հիմնական խնդիրներից մեկը, որը կարող են ունենալ հաշմանդամները՝ հասանելիությունն է։ Ահա թե որտեղ կարող է օգտակար լինել հրդեհային սանդուղքը։
- Նաև հարկավոր է հոգ տանել կենդանիներին՝ տրամադրելով նրանց անհրաժեշտ սնունդ և բժշկական խնամք։
- Ծայրահեղ անհրաժեղատության դրության ժամանակ երեխաները պետք է իրենց զգան այնպես, կարծես ամեն ինչ կարգին է։ Ընդգրկեք նրանց ծայրահեղ անհրաժեղատության իրավիճակին նախապատրաստվելու գործընթացում։ Երեխային նաև օգտակար կլինի խաղալիքը կամ սփռփիչ ուտելիքը։




ՈՐՏԵՂ ՊԱՀԵԼ ՊԱՇԱՐՆԵՐԸ

- Պայուսակում,
աղբարկողում և այլն
- Պահեք հեշտ և արագ
հասանելի վայրում
- Զրատաբացուցչից, գազի
հաշվիչից, չորացնող
սարքից հեռու
- Ելքերին մոտ

EXIT

- *Ընթերցել սլայդը*
- Քննարկե՛ք, թե որտեղ եք պահելու ծրարը:
Հիշե՛ք, իրերը պետք է շարժական լինեն:
- Պահեք դրանք ջրատաքացուցչից կամ
չորացնող սարքից հեռու՝ վնասներից զերծ
պահելու համար:
- Հարկավոր է դրանք պահել հասանելի
վայրում, ցանկալի է՝ ելքին մոտ:




ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՔ ՁԵՐ ՄԵՔԵՆԱՆ

- Բենզոբալկը առնվազն կիսով չափ լիցքավորված պահեք
- Ընտանիքի հաղորդակցության ծրագրի կրկնօրինակ
- Ավելորդ անվադող
- Զուր և սնունդ
- Շտապ օգնության դեղարկղիկ
- Տաք հագուստ/ծածկոց



- *Ընթերցել սլայդը*
- Հոգ տարե՛ք, որպեսզի մեքենայի բենզոբակը առնվազն կիսով չափ լիցքավորված լինի:
- Պահե՛ք Ձեզ մոտ ընտանիքի հաղորդակցության ծրագրի կրկնօրինակ: Միշտ ձեռքի տակ ունեցե՛ք ավելորդ անվադող: Փոխե՛ք անվադողը՝ ծակվելու դեպքում:
- Ձեռքի տակ ունեցե՛ք սննդի և ջրի պաշար:
- Ձեռքի տակ պահե՛ք շտապ օգնության դեղարկղիկ:
- Ձեռքի տակ ունեցե՛ք Տաք հագուստ/ծածկոց




ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՔ ՁԵՐ ՄԵՔԵՆԱՆ

- Կրակմարիչ
- Արտացոլիչներ կամ լուսաթարթեր
- Դեղորայք և դեղատոմսերի ցանկ
- ձեռնալամբ
- Կարևոր փաստաթղթերի պատճեններ



- *Ընթերցել սլայդը*
- Մեքենայի մեջ պահե՛ք կրակմարիչ:
- Արտացոլիչներն ու լուսաթարթերը կարող են օգտակար լինել արտակարգ իրավիճակում Ձեր մեքենան տեսանելի դարձնելու համար:
- Չեոքի տակ ունեցե՛ք կարևոր հեռախոսահամարներ:
- Պահե՛ք կարևոր փաստաթղթերի կրկնօրինակներ:




ԱՆՁՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱՐ

- Զուր
- Մնունդ/թեթև ուսելիքներ
- Դեղորայք
- Դիմացկուն կոշիկ
- Չեռնալամպ




- *Ընթերցել սլայդը*
- Թեև աշխատանքային ծրարն ավելի փոքր է, սակայն կան որոշ իրեր, որոնք անհրաժեշտ են: Օրինակ, ջուրը կարևոր է:
- Կարևոր է նաև ունենալ սննդի/թեթև ուտելիքների փոքր պաշար:
- Դեղորայքի պաշարը նույնպես չափազանց կարևոր է, հատկապես եթե մի որոշ ժամանակ Ձեր գրասենյակի շենքում եք անցկացնելու:
- Ձեռքի տակ պահեք ձեռնալամպ լրացուցիչ մարտկոցներով: Ձեռքի շարժիչով լապտերները նույնպես կարող են օգտագործվել:



ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱՐՈՒՄ

- Գրապահարաններ և ներկառուցված միավորներ
- Պատճենահանող սարքեր և ֆաքս
- Համակարգիչներ և սեղանի իրեր
- Հեռուստացույցներ և այլ էլեկտրոնիկա
- Պատի նկարներ
- Պատուհաններ

- *Ընթերցել սլայդը*
- Այս իրերից մի քանիսը խոշոր են, սակայն հողանցված չեն և կարող են վար ընկնել:
- Բոլոր այնպիսի առարկաները, որոնք կարող են վար ընկնել, օրինակ՝ գրապահարանները կամ հեռուստացույցը, պետք է կամ հողանցվեն, կամ՝ տեղադրվեն գրասենյակում անցումային տարածքներից հեռու:



ՎՏԱՆԳԱՎՈՐ ԻՐԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐՈՒՄ

- Անձնակազմի խոհանոցը՝ սառնարաններով և միկրոալիքային վառարաններով
- Այլ սարքեր, պահարաններ և դարակներ
- Գազի սարքեր, ջրատաքացուցիչ և գազի հանգույց
- Ներկերի և թունավոր քիմիկատների գտնվելու վայրեր

- *Ընթերցել սլայդը*
- Ապահովե՛ք վայր ընկնող սարքերի՝ սառնարանների և միկրոալիքային վառարանների անվտանգությունը:
- Ապահովե՛ք այլ սարքերի՝ պահարանների և դարակների անվտանգությունը:
- Ապահովե՛ք գազի սարքերի, ջրատաքացուցիչների և գազի հանգույցի անվտանգությունը:
- Իմացե՛ք ներկերի և թունավոր քիմիկատների գտնվելու վայրը:




ԵԹԵ ՊԵՏՔ Է ՏԵՂՈՒՄ ՊԱՏՄՊԱՐՎԵՔ...

Աղտոտված օդը
տանից դուրս
պահելու մեթոդ




- *Ընթերցել սլայդը*
- Պատասխան. Աղտոտված օդը տանից դուրս պահելու մեթոդ:
- Սա ՄԻԱՅՆ կիրառվում է այն դեպքում, եթե պետական մարմինները պահանջեն, որպեսզի Դուք տանը մնաք:
- Կարևոր է նաև լսել հաղորդումներին՝ ռադիո և հեռուստատեսային եթերում:



ԵԹԵ ՊԵՏՔ Է ՏԵՂՈՒՄ ՊԱՏՍՊԱՐՎԵՔ...

- Փակե՛ք և կողպե՛ք բոլոր պատուհաններն ու դռները
- Անջատե՛ք բոլոր օդափոխիչներն ու օդորակիչ համակարգերը
- Նախատեսե՛ք առնվազն **3ից-7** օրվա ծայրահեղ անհրաժեշտության պաշար

- *Ընթերցել սլայդը*
- Տեղում պատասպարվելիս կողպե՛ք բոլոր դռներն ու պատուհանները:
- Անջատե՛ք բոլոր օդափոխիչներն ու օդորակիչները, որպեսզի օդը տուն չներխուժի:
- Տեղում պատասպարվելիս 3ից-7 օրվա պաշար նախատեսեք:



ԵԹԵ ՊԵՏՔ Է ՏԵՂՈՒՄ ՊԱՏՍՊԱՐՎԵՔ...

- Փակե՛ք բուխարու խուփը
- Տեղափոխվե՛ք այնպիսի սենյակ, որը պատուհան չունի
- Ամուր փակե՛ք դռներն և օդափոխության անցքերը մեկուսիչ ժապավենով

- *Ընթերցել սլայդը*
- Փակե՛ք բուխարու խուփը:
- Տեղափոխվե՛ք այնպիսի սենյակ, որը չունի պատուհաններ, որպեսզի խուսափեք ներս մտնող օդից:
- Փակե՛ք բոլոր անցքերը կաշուկով կամ մեկուսիչ ժապավենով:



ԻՆՉՊԵՍ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՆԱԼ

- **911** և հրատապ օգնության այլ հեռախոսահամարներ, ներառյալ ՏԵՂԱԿԱՆ ոստիկանության և հրշեջ ծառայության համարները
- **911** ծառայությունը բջջային կապով, միանում է մայրուղու պարեկի, և ոչ թե ՏԵՂԱԿԱՆ ոստիկանության հետ
- Բջջային հեռախոսում գրանցե՛ք ՏԵՂԱԿԱՆ ոստիկանության հեռախոսահամարը

- *Ընթերցել սլայդը*
- Ընտանեկան ժողովի ընթացքում համոզվեք, որ բոլորը գիտեն՝ որտեղից օգնություն հայթայթել:
- Հիշե՛ք. առաջին օգնողներն այն մարդիկ են, ովքեր ամենամոտն են գտնվում: Սակայն արտակարտ իրադրության դեպքում, իմացեք
 - Երբ զանգահարել 911
 - Իմացեք տեղական ոստիկանության ու հրշեջ ծառայության համարները: Երբեմն ուղիղ համարներով զանահգարելն ավելի արագ է:
 - 911 համարից բացի, Կալիֆոռնիայի մայրուղիների պարեկն ունի 800 համար՝ 1-800-TELL-CHP, որին կարելի զանգահարել բջջային հեռախոսից, եթե 911-ը զբաղված է:



ԶԱՆԳԱՀԱՐԵՔ **9-1-1**

- Զանգեր **9-1-1** ՄԻԱՅՆ, արտակարգ իրավիճակներում, երբ
 - Որևէ անձի վնաս է հասցված կամ օգնություն է անհրաժեշտ
 - Դուք հրդեհ եք տեսնում կամ ծխի հոտ եք զգում
 - Դուք տեսնում եք թե ինչ որ մեկը օրենքը խախտում է, գողություն է անում, կամ վնաս է հասցնում մեկ այլ անձի
- Եթե պատահաբար եք զանգահարել **9-1-1**, ՄԻՎԱՐ ԴՆԵՔ ԽՈՍԱՓՈՂԸ

Քննարկեք՝ 9-1-1 համարով պատշաճ դեպքերում և պատշաճ կերպ զանգելը

- Սովորեցրե՛ք երեխաներին՝ ինչպես զանգահարել 9-1-1.
- Նշում. Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաները շփոթում են 9-1-1 համարը 9-11-ի հետ (այսինքն՝ 2001թ.-ի սեպտեմբերի 11-ի իրադարձությունների):
- Երեխաներին ցուցումներ տալիս հեռախոսահամարն անվանեք 9-1-1, իսկ իրադարձությունները՝ սեպտեմբերի 11:



2-1-1

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ

**211-ը Շրջանի ոչ
հրատապ
տեղեկատվական գիծն
է:**



- *Ընթերցել սլայդը*
- 211-ը այն համարն է, որը զանգում են ոչ հրատապ տեղեկատվություն ստանալու համար:



ՃԱՆԱԶԵ՛Ք ՁԵՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻՆ

“...Մեկը ներս մտավ կողքի դռնով և
այնտեղից հանեց հաշմանդամի
սայլակին գամված մարդուն: Դուք
պետք է ունենաք համայնքի և
հարևանության և միմյանց մասին
հոգ տանող մարդկանց
գիտակցությունը”

Դոկտոր Զոնաթան Ֆիլդինգ

Հանրային առողջության տնօրեն և առողջապահական
բաժնի աշխատող

LA Times 9/28/05թ.



- Ի՞նչ եք տեսել, կարդացել կամ լսել այն մասին, թե ինչպես են հարևանները մարդկանց օգնում արտակարգ իրավիճակի մեջ:
- Սովորաբար առաջինը օգնության են հասնում այն մարդիկ, ովքեր ֆիզիկապես մեզ մոտ են գտնվում: Դա կարող է լինել կողքի հարևանը կամ մեքենայի մեջ մոտ նստած որևէ անձ: Ի՞նչ կարող են անել հարևանները նախապատրաստվելու համար:
- Մտածեք այն մասին, թե Ձեր հարևաններից ո՞վ կարող է Ձեր կարիքն ունենալ:



ԱՌԱՍՊԵԼ/ՓԱՍՏ

ԱՌԱՍՊԵԼ


- Աղետները մարդկանց մեջ վատազույնն են արթնացնում

ՓԱՍՏ

- ...մարդկանց մեծամասնությունը հակազդում է ինքնաբերաբար և առատաձեռն կերպով

Դոկտոր Էրիկ Ջոնի,
Բժիշկ, Հանրային առողջության մագիստրոս

- *Ընթերցել սլայդը*
- Առավել հաճախ մարդիկ համախառնում են, որպեսզի օգնեն միմյանց աղետների դեպքում:




ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Ներկայացե՛ք հարևանին և ծանոթացրեք նրան(ց) Ձեր ընտանիքի հետ:
- Գտե՛ք Ձեր թաղամասի քարտեզը:
- Խոսե՛ք Ձեր թաղամասի տեղական հրատապ ծառայության անձնակազմի հետ:

COUNTY OF LOS ANGELES
Public Health


- *Ընթերցել սլայդը*
- Քարտեզը կարող է ցույց տալ, թե որտե՞ղ է ապրում յուրաքանչյուրը, ինչպես նաև թաղամասի մուտքերն ու ելքերը:
- Հատուկ հմտություններն ու սարքավորումները կարող են ընդգրկել բժշկական փորձառություն, երեխաների խնամք, հոգեբանական ծառայություն, մեքենաների նորոգման ծառայություն:
- Սարքավորումները կարող են ընդգրկել գեներատոր:



ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Մշակե՛ք Ձեր հարևանների հատությունների և հատուկ սարքավորումների ցուցակ, որոնք կարող են օգտագործվել արտակարգ իրավիճակներում:
- Մշակե՛ք լրացուցիչ ծրագիրներ հարևանների երեխաների, ծերերի և այլ անձանց համար, որոնք կարող են օգնության կարիք ունենալ:

- *Ընթերցել սլայդը*
- Հարևանները կարող են համատեղ օգտագործել միմյանց ծրագիրները կամ միասին մշակել ծրագիրներ, կամ էլ
- Ստեղծել թաղամասի հերթապահ խումբ, կամ դառնալ այդպիսի խմբի անդամ:
- Պարզե՛ք, թե որտե՞ղ են Ձեր այն հարևանները, ովքե՞ր կարող են օգնության կարիք ունենալ:



ՄԻԱՑԵՔ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻՆ

- Մշակե՛ք ծրագիր և աշխատե՛ք միասին
- Նվազեցրե՛ք անհանգստությունը, վնասվածքները և սեփականությանը հասցված վնասը
- Նվազեցրե՛ք երկրորդական վտանգները, օրինակ հրդեհները
- Մեծապես բարելավե՛ք թաղամասի վերականգնումը

- *Ընթերցել սլայդը*
- Հարևանները պետք է մշակեն արտակարգ իրավիճակին նախապատրաստող խմբային ծրագիր, որում հաշվի կառնվեն բոլորը:
- Դրանով հնարավոր է նվազեցնել անհանգստությունը, վնասվածքները և սեփականությանը հասցված վնասը: Դա նաև կարող է նվազեցնել երկրորդական վտանգները, օրինակ հրդեհները:
- Դա կարող է նաեւ մեծապես բարելավել թաղամասի վերականգնումը, քանի որ բոլորը միասին կաշխատեն:



County of Los Angeles
Public Health

ՀԱՄԱՅՆՔ



COUNTY OF LOS ANGELES

Public Health

- Այժմ, երբ մենք արդեն խոսեցինք այն մասին, թե ինչպես կարող եք պատրաստել Ձեր ընտանիքներին ու հարևաններին, եկեք նաև քննարկենք Լոս Անջելեսի համայնքի համար կատարվող ծրագրավորումները:
- Պատրաստ լինելու համար այս փուլում մենք պետք է յուրաքանչյուրս կատարենք մեզ հատկացված դերը և աշխատենք միասին:



ՊԱՏՐԱՍՏՎԵՆՔ ՄԻԱՄԻՆ

Լոս Անջելեսի շրջանում բնակվում է
ավելի քան **10** միլիոն մարդ

- Լոս Անջելեսի շրջանի Հանրային Առողջության դեպարտամենտը պատասխանատու է մեր համայնքի բնակչության առողջության պահպանման:
- Մենք կքննարկենք ծառայությունները, որոնք տրամադրում է ԼԱ շրջանը:



ԻՆՉՈՎ Է ՁԲԱՂՎՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԸ

- Կանոնավոր կերպով թարմացնում է www.labt.org կայքը՝ տեղեկատվությամբ և ռեսուրսներով:
- Հանրության համար մշակում է տեղեկատվական հաղորդագրություններ:
- Շարունակաբար կրթում է Հանրային առողջության բաժնի աշխատակիցներին և համայնքի բնակիչներին՝ արտակարգ իրավիճակներին հակազդելու գործում:

- *Ընթերցել սլայդը*
- Մեթոդներն են՝ հետևել օդի որակին, շտապ օգնության կետերից հասնող բողոքներին և անսովոր մահվան դեպքերին:
- Միջադեպերի վերահսկման համակարգը (Incident Command System) ստեղծված է առավել արդյունավետ կերպով կոորդինացնելու արտակարգ իրավիճակներին հակազդող անձնակազմի գործողությունները:



ԴԱՐՁԵՔ ՀՐԱՏԱՊ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ

- Լոս Անջելեսի Կամավորների կենտրոն
www.vcla.net
- **CERT**՝ Արտակարգ իրավիճակներին հակազդելու
համայնքային թիմ՝ www.citizencorps.gov/cert
- Տեղական հիվանդանոց/ապաստարան
- Եկեղեցի/սինագոգ/տաճար
- Թաղամասի հերթապահ ծրագիր
- Տեղական Կարմիր Խաչ
- Լոս Անջելեսի Արտակարգ իրավիճակների ցանց (**ENLA**)

- Ընթերցել համայնքի գործակալությունների ցանկն ու կոնտակտային տվյալները:
(Լսարանին հնարավորություն տալ արտագրելու տվյալները)



ԲԱԶՄԱԼԵԶՈՒԻ ԹԵԺ ԳԻԾ ԵՎ ԿԱՅՔ

- **1-866-999-LABT (5228).**

Թեժ գծի ծառայությունում աշխատում են բազմալեզու օպերատորներ, ովքեր տեղեկատվություն են տրամադրում արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու առնչությամբ՝ 7 լեզուներով, և ԱՏԴ թարգմանչական ծառայություններ այլ լեզուների համար

Ինտերնետային կայք՝ www.labt.org

- *Ընթերցել սլայդը*
- Այդպիսով տեղեկատվությունը հասանելի է դառնում այն անձանց, ովքեր խոսում են այլ լեզուներով, և նրանց հնարավորություն է տրվում շփվել և լաված լինել:
- Չնայած 1-866-999-LABT (5228) չի տրամադրում ՏԿԿ թույլ լսողությամբ կամ խուլ անձանց համար, սակայն 911, 311 (Լոս Անջելես քաղաք) և 211 (Լոս Անջելեսի շրջան) ծառայությունները տրամադրում են:
- Նաև ընթերցել կայքի հասցեն՝ www.labt.org.



ԳՐՔՈՒՅԿՆԵՐ 12 ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

- Դրամապանակի համար քարտեր
- Ընտանեկան գրքույկներ արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու մասին
- Գրքույկներ ծայրահեղ անհրաժեշտության ծրար պատրաստելու մասին
- Արտակարգ իրավիճակում գոյատևելու ծրագիր (հաշմանդամների և շարժվելու հետ դժվարություններ ունեցող անձանց համար)
- Նախապատրաստման ուղեցույցեր

- *Ընթերցել սլայդը*
- Արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու համար բոլոր անհրաժեշտ նյութերը, այդ թվում նաև այն նյութերը, որոնցում ցուցադրված է, թե ինչպես պատրաստել ծայրահեղ անհրաժեշտության պաշարների ծրար, հասանելի են 12 լեզուներով:



ՏԵՂԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Լոս Անջելես շրջան՝ զանգահարեք **211**
- Լոս Անջելես քաղաք՝ **311**
- Լոս Անջելես շրջանի աղետների թեժ գիծ՝ **800-980-4990**
- Լոս Անջելես շրջանի արտակարգ իրավիճակներում գոյատևելու ծրագիր (ESP)՝ www.espfocus.org
- Operations Organization (EOO)՝ www.lacity.org/epd
- Լոս Անջելես քաղաքի ոչ հրատապ հեռախոսագիծ՝ Լոս Անջելես քաղաքի սահմաններում զանգահարեք **311**

- *Ընթերցել սլայդը*
- (Լսարանին հնարավորություն տալ՝
գրանցել համարները:)



ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Արտակարգ իրավիճակների դեմ
նախապատրաստվելու Կալիֆոռնիայի գրասենյակ՝
www.dhs.ca.gov/epo
- Հիվանդությունների վերահսկողության կենտրոններ՝
www.bt.cdc.gov (888-246-2675)
- ԱՄՆ Ազգային անվտանգության դեպարտամենտ՝
www.ready.gov
- Թունավորումների առնչությամբ կենտրոնի թեժ գիծ՝
800-222-1222
- Ամերիկյան Կարմիր Խաչ՝ **www.redcross.org 866-GET-INFO (866-438-4636)**
- Փրկության բանակ՝ **www.salvationarmyusa.org
(800-SAL-ARMY)**

- *Ընթերցել սլայդը*
- (Լսարանին հնարավորություն տալ՝
գրանցել համարները:)



ԵՂԵՔ ՊԱՏՐԱՍՏ,
ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՄԻԱՍԻՆ

ՇՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ